

ծախոռվի, այն պայմանաւ, որ արդիւնքը մինչև մահը վահնահօրը պատկանի, իսկ մահից յետոյ վանքին:

Դեկտ. 16. Սինօղը հրամայեց Արցախու թեմական ատենին քննել Ալիղալու գիւղի Տ. Սահակ քահանայի մասին եղած ամբաստանութիւնը, նորա անթոյլատրելի պսակներ կատարելու և ուրիշ զեղծութերի համար, և արդիւնքը տեղեկացնել:

Դեկտ. 20. Սինօղը հրամայեց նոյն ատենին քննել Հաղողութ գիւղի Տ. Ստեփան քահանայի մասին եղած ամբաստանութիւնը աններելի պսակ կատարելու համար:



## ԿՐՈՆԱԿԱՆ

### Ա. Ռ. Ա. Զ Տ Ա. Բ Ի Ն.

«Երե Տէր կամեսցի, եւ կեցցուք, արացուք զայս ինչ կամ զայն»:

Յակ. Դ. 15.

**Ս**Ա. Ռ. Ք Ե Ա. Լ. Խ օ Ս Ո Ւ Մ է, մարդոց ամբարտաւանութեանը — անձնապաստանութեան մասին: «Մարդիկ կան, զրում է նա, որոնք ասում են. այսօր վաղը կերթանք այս ինչ քաղաքը, մի տարի կմնանք այնտեղը առևտուք կանենք, ու կվաստակենք. և այդ ասողներդ վաղուայ բանը չգիտեք: Ինչի՞ նման է ձեր կիանքը, մառախուղ էք, ուրիշ ոչինչ, որ քիչ ժամանակ երեսում է, ու իսկոյն անյետանում: Փոխանակ առելու Նթէ Տէրը կամենայ ու ապրենք, այս ինչ կամ այն ինչ բանը կանենք: Այդպիս, ձեր ամբարտաւանութիւններով պարծենում էք, ամէն այդ տեսակ պարծանք չարից է, ու Սակայն Առաքեալի խօսքերից մի բոլորովին ուրիշ եզրակա-

յութիւն ևս կարելի է հանել։ Եթե դատապարտելի է մարզոց անձնապատճենութիւնը, որ տարիներ առաջ հաշիւ են անում ու վճիռ տալիս դալիքի մասին, կարծես աշխարհի ու իրենց գլխի տէրն են, կարծես մի օրուայ համար անդամ իրենց կեանքն ապահովել կարող են, և չկայ նա, որ ամենքի վերայ իշխում և ամեն ինչ կարգադրում է, որ իւրաքանչյիւր բոսկ, նոցա իրենց եկած ձանապարհի վերայ կանգնեցնել և ուրիշ կողմ տանել կարող է, —պակաս դատապարտելի չէ անշուշտ այնպիսիների վեհերութիւնը, որոնք ամեն բանի վերայ երկմտում ու տատանուում են, որոնք չեն վատահանում, յօյսը վերին Նախախնամութեան վերայ գնելով և օրհնութիւն ու յաջողութիւն նորանից սպասելով մի լուրջ գործի ձեռնարկել։ Եւ այս հակադրութիւնն աւելի աչքի է, ընկնում նորա համար, որ մարդիկ սովորաբար խիզախ են լինում և համարձակ, երբ առաջը դրած գործից նիւթմական շահ ունին և յաջողութիւնն իրենցից կախուած են համարում՝ իրենց ձարպիկութիւնից, իրենց մոքի սրութիւնից և բազկի զօրութիւնից։ ընդհակառակն թոյլ, անվատահ և դեղեկոտ այն գէպքում, երբ մի բարենապատակ ձեռնարկութեան մէջ պէտք է մանեն, որաեղ իրենցից միայն բարոյական կորով և անձնուէր աշխատանք է պահանջուում։ իսկ յաջողութեան երաշխաւորը նա է, ում անուան նուիրուած է գործը և ում հովանու ներքոյ ամեն ապահովութիւն կարելի է գտնել։ Եւ ահա Առաքեալը տալիս է մի նշանաբան, որ ուղեցոյց պէտք է լինի մեր բոլոր գործաւնութիւնների համար ընդհանրապէս և պահէ երկու ծայրահեղութիւններից, որոնք հաւասար չափով հակառակ են քրիստոնէական ոգուն։ ոչ անմիտ խրոխտանօք մեր չնշին ուժերին ապաստանել, և ոչ անտեղի տարակոյններով իրոյս տալ գործից։ այլ յառաջ անցնել երկիւղած վատահութեամբ։ Եթէ Տէրը կամենայ, մի բան կանենք։

Այս նշանաբանը կարող ենք իրեւ ուղեցոյց ընդունել նաև Ժամանակի ամեն նոր շրջանաւութեան սկզբում, որ յիշեցնում է անհատին թէ նորա կեանքը մի կոհակ է միայն հասարակական կենաց հոսանքի մէջ և պէտք է որոշ տեղ

բոնէ, որոշ պարտականութիւններ յանձն առնէ ու աշխատանք գործ գնէ այդ հոսանքը կանոնաւ որելու և զօրացնելու համար: Եթէ նայում ենք մեր շուրջը, ու միսիթարական ոչինչ չենք գտնում, տեսնում ենք անրաւ պակասութիւններ որոնց առաջ շուրած մնում ենք և չդիտենք որի համար աշխատենք, որ մեկը լցուցանենք՝ յիշենք պետք է, թէ վերը Կարգադրող կայ և բոլորի մասին հոգում է. բաւական է, իւրաքանչիւրս մեր պարաքը ճանաչենք և դոնէ մի վերքի վերայ սպեզանի դնենք, — մնացածն ինքն իրեն կուղղուի: Արդեօք շատ բան հենց նորա համար ց' խանդարուում կիսակատար ու անմիտթար զրութեան մէջ մնում, որ կարծում ենք, թէ միայն մենք ենք հոգացողը, և որովհետեւ մենակ ոչինչ անել չենք կարող, աւելի լաւ է բոլորովին չմօտենանք գործին և մեղքն ուրիշի վերայ ձգելով արդարանանք. մինչդեռ եթէ մօտենայինք, Աստուծոյ օգնութեանը վստահելով մի կողմն ուղղենք՝ միւսն էլ մի ուրիշը կուղղեր, և այսպէս հետագիւտէ ամբողջը զլուխ կդար: Խոկ որչափ շատ բան կայ ուղղելու կամ նոր սկսելու. որչափ բան կարող էր անել մեղնից ամենաապիկարն անգամ՝ որչափ կանէինք բոլորս մէկտեղ, եթէ ամէն մէկս իւր պարաքը ճանաչեր, բաւականանար այդ պարաքի սահմանում տրածով — և անէր մի բան: Ահա մեր եկեղեցին, մեր Ա. Աթոռը՝ իւր բազմակողմանի պահանջներով՝ դարադլուխ է նորա համար այս տարին՝ այնպիսի դարադլուխ, որպիսին շատ քիչ հաստատութիւններ աշխարհիս վերայ ունեցել են և ունին: 1600 տարի է կանգուն է նա, 1600 տարի հովանի հայութեան — լուսոյ մայր, երկնային սիրոյ հանդիսարան, բարեաց ուսուցիչ, առաքինական զգացմանց և բարւոյ սնուցիչ՝ միսիթարիչ և հանգուցիչ տառապանքի օրերում, սրբութեան և զգաստութեան առագաստ ուրախութեան ժամին, — ապաւէն և զօրավիզ ընդդէմ ամէն հալածանաց, չարեաց, փորձանաց, և անձկութեանց: Սակայն քանի՛ հայ մարդ կայ այսօր, որ պարզ դիտակցէր, թէ ի՞նչ է եղել դարաւոր անցեալում և ի՞նչ է այժմ իւր համար այդ սուրբ եկեղեցին. — կարող է լինել աւելի սև ապերախտութիւն, քան ներկայ սերունդը ցոյց է տալիս

զեպի այդ նուիրական հաստատութիւնը՝ աշխատելով չեռու փախչել նորանից, արհամարհել նորա սրբութիւնները, ոչինչ շիմանալ նորա անցեալից և ոչինչ չհասկանալ նորա յաւիտենական սկզբունքներից, մոռանալոյ որ նորան է, պարտական իւր պատմական կեանքի ամենափառաւոր վայրկեանները և միակ արժեքաւոր արդիւնքները, իւր իսկ հոգեկան աշխարհի փոքր ի շատե, միիթարական դժերն ու գնահատելի կողմերը: Բայց ոչ մի ապերախտութիւն անպատճ չի մնում: Գժրախտ ենք, եթե, օր առաջ չզգաստանաք, եթե մեզ չսթափեցնե նոյն իսկ այնպիսի մի վեմ յիշատակ, ինչպիսին է ա. Էջմիածնի հիմնարկութեան 1600-ամեայ տարեղարձը:

Որքան յիշողութիւններ է նա զարթեցնում, որքան կարիքներ բաց անում և պարտականութիւններ զնում մեր առաջ: Մայր Տաճարն անշուր և խարխուր զրութեան մէջ, նորան շրջապատող հաստատութիւնները իւղձ, բազմակարու. Հայ եկեղեցիներն ամենուրեք զուրկ արտաքին բարեզ պրդութիւնից և ներքին վայելչութիւնից. Հոգիւնները մեծ մասամբ անհամապատասխան իրենց կոչման. Հօտն առանց հոգեոր խնամքի՝ ենթակայ ամենաշար աղդեցութիւնների և ամենամոլար ներշնչումների. մանուկ սերունդն առանց հոգեոր զաստիարակութեան, առանց բարոյական կրթութեան, առանց բարոյական զդացումների ու խոկումների: Զկայ դպիր՝ աշակերտ ձշմարիտ գիտութեան, որ հին ու նոր կեանքի գանձարանը պրպտէր, հիմնական խնդիրներ մէջտեղ բերէր ու պարզաբանէր, —միաք լուսաւորէր, առաջնորդող զաղափարներ տար. չկայ կենդանի բարբառ, որ սրտեր յուզէր, քրիստոնէական ոգի արծարծէր՝ ոգեորէր յաւիտենական բարւոյ, աւետարանական ձշմարտութեան, ազգային Եկեղեցւոյ ինքնուրոյն սրբութեան վեհ սկզբունքներով: Նիւթապաշտութիւն և գծուծ հաշիւններ գերել են անհատի և ամբողջ հասարակութեան ուշ ու միաբը, —արտաքոյ կարգի խորհրդածութիւնների համար տեղ և միջոց չկայ: Տարիներ առաջ հաշուում ենք այն սնոտի արդիւնքը, որ ձեռք բերելու յոյս ունինք մեր խորամանդ և ճարպիկ արարքներով, իսկ անմիտ կուրութեամբ և վատ անհաւատարմութեամբ կորցնում ենք

այս վայրկենին մեր ձեռքում եղած իսկական, անդնահատելի, անդառնալի բարիքներ։ Ժամանակ է զդաստանալու և իսկական բարին որոնելու, — որոնելով՝ մեր ունեցած իւրաքանչիւր փոքրիկ կարողութիւնը դործ դնելու, որպէս զի զանենք և արդիւնաւորենք. զի որ ոք զիաիցէ զրարին, և «Հառնիցէ, մեղք են նմա»։

Կ. Վ.



Ի՞՞ՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՊՐԵԼ ԵՒ Ի՞՞Չ Է ՃՇՄԱՐՑՈՒԹԻՒՆԸ\*.

## Ա.

Ի՞նչպէս պէտք է ապրել.

Մարդու յեղյեղուկ մտածողութեանց յոգնեցուցիչ բազմազանութեան մէջ կայ մի ճշմարտութիւն, որ ամէնքը ընդունում են և առանց որի միտք, նպատակ և կեանք չկայ։ Այդ ճշմարտութիւնը, որ նոյն իսկ բացասութեան ամենամոլեսանդ ոգին չի կարող ժխտել, մարդու բանական արարած լինելն է։

Ըսդունելով մեր բանական լինելը, չենք կարող չընդունել որ կարող և պարտաւոր ենք բանական կեանք վարել, Եւ ահա մեր առաջ ծագումէ՝ ինչպէս պետքէ ապրել — անխուսափելի և օրհասական հարցը։

Ամեն ժամանակներում մարդու զբաղուել է, և չեր կարող չզբաղուել, այդ հարցով։ Բանական մարդը, որ ազատ է անօրինելու իւր կեանքը, չի կարող չտալ իրան այդ հարցը իւր բանական և ազատ գոյութեան ամեն մի վայրկեանում, ներկայումս, երբ մարդկութիւնը յանուն բանակա-

\* Ա. Նեպիւռե «Что есть истина, զրքեց»